ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՏԱՆ-ԴԾ-2020/38-38
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» մարտի 2021 թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ի ՎՈՐԿՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խաչատուր Բաղալյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 17-րդ միջոցառումը հաստատելու մասին» թիվ 714-Լ որոշումը (այսուհետ՝ Որոշում) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 157-Ն որոշումը, «Վիրտլո» ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Ծրագրի իրականացման շրջանակներում Կազմակերպությանը հատկացնել 18,576,000 (տասնութ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել Որոշմանը և սույն պայմանագրին համապատասխան:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունը իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով և սույն պայմանագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (Միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. Իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին և պայմաններին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում պահանջել վճարել իրեն սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարի 75 (յոթանասուն հինգ) տոկոսը՝ 13,932,000 (տասներեք միլիոն ինը հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամը, իսկ մնացած գումարը՝ 4,644,000 (չորս միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամը սույն պայմանագրով սահմանված ամփոփիչ հաշվետվությունները Նախարարության կողմից ընդունվելուց հետո, բայց ոչ ուշ, քան 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարելու դեպքում՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. Անհրաժեշտության դեպքերում, սույն պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման շրջանակներում, Կազմակերպությանը ցուցաբերել խորհրդատվական աջակցություն:

2.3.2. Կատարել Ծրագրի (առանձին Միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ:

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. Իրականացված Միջոցառումների մասին ներկայացված կատարողական ամփոփիչ հաշվետվության վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել՝ այն ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե իրականացված Միջոցառումները համապատասխանում են Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա այն ընդունվում է: Ընդ որում, Նախարարությունը, հաշվետվությունն ընդունելու դեպքում, եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել Ծրագրի շրջանակներում Նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան (առանձնացված) հաշվառում:

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.4.3. Պահպանել կազմակերպությունում՝ պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ առկա աշխատակիցների թիվը, ինչպես նաև ձեռնարկել միջոցներ աշխատակիցների թվի ավելացման նպատակով: Ընդ որում կազմակերպության աշխատակիցների թիվը համարվում է չպահպանված եթե

աշխատակցի ազատման և նոր աշխատակցի ընդունման ժամանակահատվածը գերազանցում է 30 օրը:

2.4.4. Կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. Նախարարությանն անհապաղ տեղեկացնել Միջոցառումների իրականացմանը սպառնացող դժվարությունների կամ իրականացման անհնարինության վերաբերյալ:

2.4.6. Ծրագրով և սույն պայմանագրով նախատեսված Միջոցառումները կատարել՝ չխախտելով երրորդ անձանց իրավունքները:

2.4.7. Ծրագրով և սույն պայմանագրով նախատեսված Միջոցառումները (փուլային և ավարտական) իրականացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պաշտոնական գրության տեսքով ներկայացնել իրականացված Միջոցառումների կատարողականի վերաբերյալ Կազմակերպության ընթացիկ (փուլային) և ամփոփիչ հաշվետվություն՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս համարվող թիվ 2 հավելվածի համաձայն՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.8. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին և այլ նյութերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.9. Ծրագրի, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման ընթացքում Նախարարության կողմից անհամապատասխանությունների բացահայտման, ինչպես նաև ընթացիկ (փուլային) և ամփոփիչ հաշվետվությունների չընդունման դեպքում՝ Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.10. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.11. Սույն պայմանագրի 2.4.7. կետում նշված ժամկետներում կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա դիմաց վճարել տույժ՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 0.05 տոկոսի չափով:

2.4.12. Ծրագիրն իրականացնել առավելագույնը 8 (ութ) ամսվա ընթացքում:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը Կազմակերպությանը կտրամադրի 2.2.1 կետին համապատասխան՝ ոչ ուշ քան քան 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում՝ Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Ծրագրիը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն	**Կազմակերպություն**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«Ի ՎՈՐԿՍ» ՍՊԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, 0010	ք. Երևան, Գյուլբենկյան 24, գրասենյակ 98, 0033
ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900011031912	Հ/Հ 220001920838000
ՀԿՀՀ 02565518	ՀԿՀՀ 01008329
Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան	Տնօրեն՝ Խաչատուր Բաղալյան

Հավելված 1
2021թ. մարտի 29-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՇ-2020/38-38 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառում							
#	Փուլի անվանում	Գործողության բնութագիրը (աշխատավարձ, կատարվելիք գործառույթներ, այլ)	Չափելի ակնկալվող վերջնարդյունք (փուլի ավարտին)	Գնահատման չափանիշ (որակական և քանակական)	Փուլի սկիզբ (ամսաթիվ)	Փուլի ավարտ (ամսաթիվ)	Փուլի համար ծախսվելիք գումար
1	Փուլ 1 Առցանց և անցանց գովազդային արշավ Հավելյալ սերվերի/h ոսթինգի ծախս	Առցանց գովազդ ներառյալ՝ գովազդ Facebook, Instagram համակարգերում, անցանց գովազդ ներառյալ՝ արտաքին գովազդ Երևանի փողոցներում, թռուցիկների թողարկում և տարածում Պայմանավորված օգտատերերի կտրուկ աճով, ապահովել տվյալների ավելի արագ մշակում իրականացնող սերվերներ՝ հոսթինգ	Հավելվածի ճանաչելիության բարձրացում և ներբեռնումների ավելացում՝ 20 նոր հաճախորդ կամ հանդիպում պոտենցիալ հաճախորդների հետ, 40,000 կայքի այցելություն, 10,000-20,000 ներբեռնումներ Վիրտլո համակարգի անխափան աշխատանք՝ 4,000 օրական օգտագործումների դեպքում, տվյալների թարմացում Վիրտլո համակարգում 24 ժամվա ընթացքում	Անխափան առցանց գովազդ 500,000 դիտումներով, 7500 տարածված թռուցիկ, արտաքին գովազդ 3 բարձր արդյունավետությամբ տեղանքներում (5,160,000 դրամ) Վիրտլո համակարգի աշխատանքը ապահովող հավելյալ հոսթինգ հետևյալ պարամետրերով՝ 6 core 1TB SSD drive 32GB RAM (2,016,000 դրամ)	15.04.2021	01.08.2021	7,176,000

2	Փուլ 2 Առցանց և անցանց գովազդային արշավ Հավելյալ սերվերի/հոսթինգի ծախս Ապրանքային նշանի գրանցում	Առցանց գովազդ ներառյալ՝ գովազդ Facebook, Instagram համակարգերում, անցանց գովազդ ներառյալ՝ արտաքին գովազդ Երևանի փողոցներում, թռուցիկների թողարկում և տարածում Պայմանավորված օգտատերերի կտրուկ աճով, ապահովել տվյալների ավելի արագ մշակում իրականացնող սերվերներ՝ հոսթինգ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունում ապրանքային նշանի գրանցում 122 երկրների հաշվարկով	Հավելվածի ճանաչելիության բարձրացում և ներբեռնումների ավելացում՝ 60 նոր հաճախորդ կամ հանդիպում պոտենցիալ հաճախորդների հետ, 40,000 կայքի այցելություն, 10,000-20,000 ներբեռնումներ Վիրտլո համակարգի անխափան աշխատանք՝ 4,000 օրական օգտագործումների դեպքում, տվյալների թարմացում Վիրտլո համակարգում 24 ժամվա ընթացքում Ապրանքային նշանի միջազգային պաշտպանվածություն 122 երկրներում	Անխափան առցանց գովազդ 500,000 դիտումներով, 7500 տարածված թռուցիկ, արտաքին գովազդ 3 բարձր արդյունավետությամբ տեղանքներում (5,160,000 դրամ) Վիրտլո համակարգի աշխատանքը ապահովող հավելյալ հոսթինգ հետևյալ պարամետրերով՝ 6 core 1TB SSD drive 32GB RAM (2,016,000 դրամ) Ապրանքային նշանի միջազգային գրանցում 100+ երկրներում (4,224,000 դրամ)	01.08.2021	30.11.2021	11,400,000
Ընդամենը՝ 18,576,000 ՀՀ դրամ							

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, 0010
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011031912
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան

Կազմակերպություն

«Ի ՎՈՐԿՍ» ՍՊԸ

ք. Երևան, Գյուլբենկյան 24, գրասենյակ 98, 0033
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220001920838000
ՀՎՀՀ 01008329
Տնօրեն՝ Խաչատուր Բաղալյան

Հավելված 2
2021թ. մարտի 29-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՇ-2020/38-38 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Փուլի անվանում	Միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքներ	Փաստացի իրականացված աշխատանքներ	Աշխատանքների ոչ լիարժեք կատարման հիմնավորում	Ծախսված գումար
Ընդամենը				

Նշված տեղեկատվությունն անհրաժեշտ է ներկայացնել բոլոր տեսակի փաստաթղթային և էլեկտրոնային հիմնավորումների հետ միասին (պայմանագրեր, տեղեկանքներ, վճարման տեղեկագրեր և այլն՝ պատճեների տեսքով)՝ ստորագրված կազմակերպության ղեկավարի կողմից:

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, 0010
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011031912
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան

_____

Կազմակերպություն

«Ի ՎՈՐԿՍ» ՍՊԸ

ք. Երևան, Գյուլբենկյան 24, գրասենյակ 98, 0033
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220001920838000
ՀՎՀՀ 01008329
Տնօրեն՝ Խաչատուր Բաղալյան

_____